

Հետեւեալ յօդոս տըը երեւցած է *Revue Médécine de médecine et de chirurgie* ամսագրին 1904 թ յունուարի թիւին մէջ :

Բժշկական թիւիկները ՏԱՆԿԱՍՏԱՆԻ Մէջ

Ատենէ մը ի վեր, թոյնները շատ « մտա » են, ոչ թէ՛ բարեբաղդաբար՝ բարբերու, այլ զբաղանութեան մէջ, Կարծես թէ խաբ մէկ ըրած ըլլան, շատ մը հմուտներ անցեալին մեծ ոճիւնները երեւան հանելէ ուրիշ բան ըրած չունին : Սեւցած մաշկազաթներն նոր ապացոյցներ կը թոյնին : Երբմիկ ահանա-տեսները, ճիւղաւոր զոռն, եւ կեանք աղատէ՝ առածին հաւատարիմ. վախերնու մունջ կը մնային, բայց իրենց « մթառաւորոց ստուկ » ները զերջապէս կը կանգնին հիմա :

Կը տեսնենք բարձրատարած մարդապաշտ-ներուն շարքը որ կ'անցնին տէքերնու առջեւ, Անգլանդի Զ. ներքը՝ Վուալէնները, Մոնթես-փանները, մինչդեռ իրենց ետեւէն կը քաշկր-տուի իրենց զուերուն ողբալի թափօրը : Եւ այդ բոլոր արհաւիրքներուն պատմութիւնն իմանալով, բարի ընթերցողն ինքզինքը եր-ջանիկ կը համարի որ կ'ապրի մեղքազորարարոյ դարուն մէջ, որուն խաղաղութիւնը քանի մը հազուադէպ շատ անհամբիւր ժառանգորդներ կամ խելագար խթիրեղներ միայն կը մղողին : Սակայն այդ ոճիւններու անցեալը դեռ կ'ապրի, ու թունաւոր անասունի մը պէս մեղի կը քառի :

Փարիզէն քիչ հեռու, Վափորի սակեղօծ ափերուն վրայ, կը խլրտայ ամբողջ ժողով-րդերը մը կախարչներու, թունաւորիչներու որոնք ոչ մէկ կերպով վար չեն մնար ուրիշ դարերու նմանօրինակ տիպարներէն : Գաթրին Տիկինն իր արքայական նաւովը եթէ Պոլիս հասցիպիլ առար, հան պիտի գտնէր իր սափ-րէն ու իր կախարչութիւններն Սթամբուլի թաղին, նոյն իսկ եւրոպական թաղին՝ Բերայի մէջ :

Մասնեցիկ որ չափեկան պիտի ըլլար, քանի որ չիւթը մեծ այծմէնի թիւն ունի, խօսիլ Պոլսի մէջ բժշկութեան վիճակին ու Սուլ-թանին արքունիքին մէջ թոյնի գործածու-թեան մասին : Մանկականաց խալիֆան

phobique մըն է, ա'լ ասի գաղտնիք չէ ոչ մէկուն համար : Պիտի ցոյց տանք թէ մեր արեւելքի պատմականիցները ի'նչ անապատու-թեանց, ի'նչ նախապաշարմանց, ի'նչ բռնաու-րական քմայքներու դէմ մաքառելու ստի-պուած են, առանց հաշուելու աքորի կամ սպանման վտանգը որ ամէն օր կը սպառնայ իրենց : Եթէ Սթամբուլը Բիւզանդիոնն չի կոչուիր այլեւս, Թէոսթոյայի հինաւորաց քա-ղաքին մանուածպատ ոգին եւ ողբերգական բարեքիւր սլանած է սակայն :

Ա

Դեռ երեսուն քառասուն տարիի չափ առաջ բժշկութիւնը Պոլսի մէջ ուրիշ ներկայացու-ցիչ չունէր բայց եթէ երկու երեք դասական գործնականագէտներ Փիլալի ոչ նաւալ զա-ռանեղ զպրօցէն ելած : Այդ նկարագիւր եր-րեակնի վրայ — տասերկու տարեկան տղու աչքեր ապշութեամբ կը դիտէին այն ատեն այդ կենդանի մոմաներուն լիւրկ դեմքը, սրածայր բարձր վզնոցը եւ եռածալ լայն փող-կապը, — կ'աւելնար ֆրանսացի բժիշկ մը, Ծր. Լէնն, որ իր խառնաքի պտտանակիցնե-րուն հետ շատ աղէկ կը համաձայնէր : Այս վերջինները Հռոմի ծերակոյտին նախկին ան-դամներ էին. Ծր. Լէնն, եթէ չեմ սխալի, Խրիմի պատերազմին ատեն բանջիւնն մէջ բժիշկ էր եղած, ֆրանսական զորքերուն Պոլսէն անցնելու միջոցին, խորապէս հրա-պուրուած էր Հայունի մը գեղեցկութենէն ու Ֆրանսա դառնալուն պէս զորքերը կտր-դաղրելով եկած էր Պոլիս եր գեղանի Արե-ւելոսէիին հետ կարգադրելու :

Գիտութեան այդ չորս իշխաններուն զխա-ւոր զբաղումն էր հաւաքումը Պոլիս հաստա-ուած վայելչագիւր Փարիզուէի մը՝ տիկին համառէի Ալլունի սուռնը, ժամերով ապրիլն անդին խոսակցելու եւ օտանկական զմայելի լճաքին ճաշակելու : Այդ միջոցին բժիշկները շատ քիչ կը կանչուէին, եւ ասոր համար ալ սակայն շատ մեծ գումարներ կը ստանային երբ կանչուէին :

Բարձր դասակարգի մարդիկը միայն երբեմն կը դիմէին բժիշկին, այն ալ երբ մեռելներու մաս մը միացած էր կամ անոր մօտ բան մը : Միջին դասակարգը իր խախտաբոյնները (rebouteur), իր փորձականները empirique(!), իր ազօթոց փեթիկները ու էր, Գալիլ գոյծա-

և որ դասակարգի մարդոց, աստուք իրենց տունը կը բերէին զեղազործի օգնականներն որոնք տղրուկ փակցնելէն զատ ուրիշ բան չէին ընելու կամ Յու. նառասնէն եկած պառաւանդն որոնք այսպէս ջուրով կը լուային զիրենք, եւ կամ կը դիմէին Սյոնորգի զնչուսիններուն որոնց քաղցեղական համայնիկները (amulettes) անվիճելի կարողութիւնն ունէին ամէն հիւանդութիւն բուժելու Արդէն, իւրաքանչիւր ազգասունասանք իր անվիրայելի զեղազիրներն ունէր՝ նախանշողներն միացած, եւ իր զեղապտուիլը մայրս ամառն, լուսնին առաջին շաբթուան քաղած ամէն տեսակ խոտերով լցուն :

Ինչ ինչ հիւանդութեանց մէջ, անփոփոխաբար միեւնոյն զեղը կը գործածէին : Այսպէս, թիֆօն բռնուածին երեք ժամը անգամ մը լիմոնի հիւթ կը խմցնէին զուսով մը ջուրի մէջ, ինչ որ գէշ ինչիւք չէր, եւ սրտաշնեղը մահանելի մէջ թաթխուած վարչամականերով կը փաթթէին : Եթէ հարկ ըլլար ուռնցք մը, ակաւաններու բորբոքումը կամ խոլային ծայրայեղ աճումը մը անցնելու, զուսած մասին վրայ կարծիք լաթ մը կը փռէին եւ մոմի մը լոյսը կը մօտեցնէին անոր մինչեւ որ հիւանդը ու ժով ծամածուրութեամբ մը հակեցնէր թէ արդիւնքը անհանդուրժելի էր ա՛յ : Ինչ ալ ըլլար, այդքէն մը նախնական մարդիկը բժշկելի խնամքներուն չէին դիմեր : «Չէջիմ Նայիրիւր(1)» այս էր իրենց կարծիքը : Եւ, հետաքրքրական իրողութիւն, — բժիշկ բժիշկի մէջ՝ աստիճանական բանիք են որ կենսանք խոտախմբիլ. — մահախու ամենէն բարձր թիւը՝ այդ երանելի օրերուն՝ 100)ին 1. կամ 2 էր : Կնչուսելով անշուշտ համաճարակ չըլլանիքը՝ «Ապիտին տես յետոյ մեռելը իտալական առածին զէմ Արեւելիքը բաւական իրաւացի կերպով կը հանէին սա բանաձեւը, թերեւ ամբարտաւան բայց աւելն կերպով ճիշդ. «Պոլիս մնալ եւ ապրել» :

Օսմանեան ժողովրդին այս հակաբժշկական ոգւոյն հակառակ Մահմուտ, Մէճիտ եւ Ալիդ ագիին Սուլթանները զիսէին պատուել ըր՝ ժիշկիները : Նոյն իսկ շատ միշտ քաղաքացիացի կուտային անոնց համութեան ու անոնց կատարած դործին մարդկային բնութեան հեղափոխութիւնը : Նոյն իսկ շատ միշտ քաղաքացիացի կուտային անոնց համութեան ու անոնց կատարած դործին մարդկային բնութեան հեղափոխութիւնը : Նոյն իսկ շատ միշտ քաղաքացիացի կուտային անոնց համութեան ու անոնց կատարած դործին մարդկային բնութեան հեղափոխութիւնը :

Քան արհամարհուած էր Արեւելքի մէջ եւ թէ ո՛րքան անձուկ էին անոնց նիւթական միւջնոցները Սուլթան Ալիին մահաւանդ, բարձրի հոգեկու կազմուածք մը ունենալով հանդերձ, յաճախ խորհուրդ կը հարցնէր անոնց, երբեմն նոյն իսկ թոյլ կուտար որ մահաբանին կերպով ականջնէն զինքը, թէպէտեւ յետոյ ծովը նետելու կուտար պարկիւղակի եւ եռացած ջուրի մէջ խաշած անայի սրուակները զոր ձեւի համար իրեն կը պատուիրէին Բայց կայսեր տուած օրինակը անտարբեր կը ձգէր ժողովուրդը : Արդի Սուլթանին իշխանութեան սկիզբն է որ — իշխանութիւն որ էն առաջ՝ բարգաւաճ լուսաւոր ժամանակաշրջանի մը բացման յոյսը տուաւ. — չարժու մը սկսաւ թուրք, հայ եւ յոյն երթնասարգութեան մէջ ի նպատակ բժշկական ուսումնասիրութեանց, եւ ասոր՝ շնորհիւ Փարիզի հիւանդանոցներու նախկին սէնթերնո, մորթի հիւանդութեանց մեծանուն մասնագէտ Զաւպագո փաշայի նախաձեռնութեան և Առիթ ունեցած եւ իր զբիւրնի մէջ հանդիսատես ըլլալ ճշմարտագէտ յատկանշական տեսարաններու, այսպէս, բորոտութենէ բռնուած խեղճ ողորմելիներ իրենք քաշելու եւ զանոնք համոզելու համար որպէսզի թող տան վերքերնին դադէ, ափսոսուն մէջ մէհիտի մը կը սահեցնէր : Իր այս առատաձեռնութեան լուրը գիւղերուն մէջ տարածուած ըլլալով, բորոտներ գոռոցադուր սկսան խուժել Զաւպագո փաշայի տունը : Եւ այդ այնքան շահասէր որքան շահեկան յաճախորդներուն յանկարծական ետանդը իրեն վերջի վերջոյ շատ սուղի պիտի նստէր, եթէ իր մեթոտին մէջ փոփոխութիւններ մտցոցած չըլլար : Բորոտանոց մը հինից եւ յաջորդեցաւ Սուլթանէն անոր խոշոր նպատակ մը կապելու :

Արդի Սուլթանը ծայրայեղ սէր մը չուէր ֆրանսական բաներու եւ մահաւանդ ֆրանսական մտքին համար : Իր ոխը շատ կանուխէն է ծագած, թերեւս քիչ մըն ալ կարգադրանայան մեր կայսերական արքունիքին մէջ բուռած քանի մը խօսքերու թեթեւութեամբ : Մահութէն այն մեծ աղմուկ հանող այցելութիւնը զոր Սուլթան Ապիւրէ Ալիդ տուաւ Նափոլէոն Գին : Ապիւրէ-Նափոն, այն ատեն՝ կայսերատուն իշխան, թուրք վեհապետին ընկերացողներուն թիւին մէջ էր : Կայսրուհին եւ զինքը չըլլապատու ըլլոր աններ Մուրատ իշխանը շատ

(1) Բժիշկը մարդ կը սպաննէ :

համակրութեամբ ընդունեցան, մինչդեռ անոր եզրօր վերապահակաւ ընթացքը թիւ յերկրի մարդոց անխորժ եկաւ: Լափողէոն սա գուշակաւոր բառն ըսած էր՝ Լամիտ իշխանին վրայ խօսելով: «Կը տարակուսիմ որ այս ապագայ վեհապետը իր ժողովուրդը երջանիկ ընէ»: Այս խօսքը կրկնեցին Լամիտին որ տար հաւարուն գմբտ զէն ըրաւ մեր երկրին: Երբ իր երկիրը դարձաւ ու զանք ելաւ, երիտասարդ թուրքերուն արգիլեց Փարիզի համալսարանը դաւ եւ դանոնք բոլորն ալ Պերլին դրկեց: Միայն իր քորիստոնեայ հպատակները, որոնք ազատ էին իրենց ընտրութեան մէջ, կրցան երթալ իրենց բժշկութիւնը Ֆրանսայի մէջ ուսանելու:

Եթէ մէկը կար որ պէտք էր հետաքրքրուիլ մեր հասարակութեան անոր Պոլսոյ մէջ յարատեւ դարգացմանը աշխատել՝ առանց բնիկներուն հակառակութիւնն ընդգրկելու, աւ ալ ջլախտաւոր Ապտիւլ Լամիտն էր: Սակայն միշտ խորունկ հակակրօնութիւն մը ճայց տուած է մեր պաշտօնակիցներուն: Եթէ հաւանութիւն տուած է այն բարոյականք որոնք մտքըւած են կիւլ-Լանէի գլոյրցին մէջ, տարազգի ուսուցիչներու անուանման, եւն, եւ եթէ նոյն իսկ խոշոր գումարներ ծախսած է բժշկական վարժարանը իրականացէս բարձր հաստատութիւն մ'ընելու համար, աւտոր՝ ինչպէս իր բոլոր մարդասիրական արարքներուն՝ շարժաթիւթը եղած է հանրային կարծիքը խաբելու: Ըսել չեմ ուզեր թէ բոլորովին ես կը կենայ մեր ծառայութեանց գիմնէլ: Իր պալատը լեցուն է բժշկոգներով, որոնք են իր համանաւոր գուշակները: Բայց եթէ ատոնց մէջ կան նաեւ պարկեշտ մարդիկ եւ ճարտար բժիշկներ, աւտոնք նորէն ստիպուած են արուեստին բոլոր արժանապատուութիւնէն դուրիկ եղող փորձականներու վտանակի մը հետ չփուռ ունենալ: Նորին վեհապետութիւնը աղի որ ամսականներ կը վճարէ ատոնց, բայց երբեք անոնց ինքզինքը նայել չիտար: Միակ գլխաւորականները որոնց կը գիմնէ իր գուշակներն, են, իր անապագաները, իր մեռելահարցուկները: ասոնք իր վտանակութեանը տիրացած են, ուզածնուն պէս արեւ կը ծագեցնեն կամ անձրեւ կը բերեն: — ու աւելի անձրեւ քան արեւ — տիւր ու հրաշալի նըլարդ-ֆէօպին մէջ:

Ասոն մը, Սուլթանը իբր արքունի բժշկապետ ունեցաւ եօթանասնամայ Մամբոհնի

փաշան, որ իր պարզուկ ու հաւատարմիմ ձեւով՝ վերջիվերջոյ անոր հանելի յաղողած էր ըլլալ: Ապտիւլ-Լամիտ զայն «փէտէր» (հայր) կը կոչէր, անոր նուիրած էր ամբողջ կահաւորուած հոյակապ վէլլա մը՝ երկու միլիոն արծող, ամէն առթիւ 200 թրքական ոսկիի պարգեւներ կուտար անոր, եւ զայն ինքնող մանկամարդ կնոջ — ամէն երկու կամ երեք ամիսն անգամ մը այդ կինը կը փոխուէր — կը զրկէր զեղարուեհոտական գոհարատուներ ուր փակուած էին իր օգոստոսփառ տիրոջ թանկագին նայուածքները: Ինչպէս կ'ըսէր զոգոգոր — թարաւ այդ արքունիքի բժիշկը: Թանկագին՝ արգարեւ, որովհետեւ այդ «նայուածքներ» այն շքեղ պաշտանդներէն էին զոր փառնայանները միշտ ձեռքի տակ ունին, պարզ զայլաբանները: Իսկ այն, Բայց օր մը Սուլթանը իր լիտենենտէն իմացաւ, — եւ ճշմարտութիւն էր — թէ Մամբոհնի անտրակ մ'ունէր ուր ժամանակադրականօրէն կը նշանակէր յառաջդիմութիւններն այն աշխատէր հիւանդութիւններուն որուն ենթակայ է նորին վեհապետութիւնը: Անմիջապէս շտրտազուրկ եղաւ: Ուստիկանութիւնը ամբողջ ոտքի եկաւ, աւտոր խուզարկեցին, գետնափոր մասերէն մինչեւ անաստաղք տանն ու վրայ ըրին, բան մը չգտան, տեսարակը ապահով տեղ էր պահուած:

Բ

Մինչ այս մինչ այն, Ապտիւլ-Լամիտ չուէրներ, — զորմ ու իրեղէն — կը զրկէր ֆրանսական, աւստրիական, իտալական եւ գերմանական հիւանդանոցներուն: Տը, Տըլաքուր, ֆըրանսական հաստատութեան բժիշկը, Օսմանի շքանշանը կ'ընդունէր, եւ Նորին վեհապետութիւնը կը կատարէր մի քանի անգամ իր մարթիկին փափաքը՝ Տը, Նիքուր հրաւիրելու նորահաստատ մանրեւրոքական էնսթիթիւթի իբր վարիչ: Կոսմիտք չունինք այս հիմնադրութեան պաշտօնավարման ու անոնց տուած արդիւններուն վրայ խօսելու, բայց Նիքուր ընդարձակ թրքական անկեանոցը, քանչիւն կերպով կազմակերպուած, շուտով լեկիցեցուն եղաւ: Արեւելիցիները այլեւս չէին մոտենէր թէ բժիշկները մարդ կը սպաննեն: Կարելի՛ ալ էր որ ինչ կըլլա խորիկ, անկեանոցներն զիրքը զմայլելի, անուշոց ոտաւ ու ատող, անկողիները մաքուր ու կակուղ, — այս բոլորը

շնորհիւ։ Սուլթանն անստանձնեմ թեանց։ Բոլոր թուրքերը ամենաշնչին պատրուակով մը — ուրիշ երկիրներու մէջ ալ միեւնոյն քանը չէ՞ միթէ,— իբր մեծ շնորհ մը կը խնդրէին ընդունուիլ այդ հիւրընկալ տան մէջ։ Անշուշտ ըստ խնդրանքներն ալ արդարանալի չէին։ Բայց Արեւելքի մէջ ընդունուները առեւիժ մարդասիրական են քան վարակեալն։ Ինչդ վեց հարիւր անկողինները շուտով բռնուեցան։ ամէն կողմ պատգարակներ ալ գրին։ — Թուրք թախան զուրա ուրիշ տեղեւանք ալ այդ բանը կը պատահի։ շուտով անկիւնոցին յարակից մասեր կանգնեցին, եւ անոնք ալ անմիջապէս գրաւուեցան հիւանդներէ։ Վերջապէս գործը կարգին դուրս ելաւ։ Բայց կարելի՞ էր դիմադրել թշուառի մը որ գլխով թիւն կը հայցէր՝ ինչի՞նչին նուիրական անուներն ապաւինեցողով, վեհապետը նոյն իսկ իր պալատին մէջ ստիպուեցաւ մեծ հիւանդանոց մը սարքել։ Բայց միայն զինուորային կ'ընդունուէին այնտեղ։ Ինչն իսկ հրաման տուաւ իր բժիշկներուն զանոնք լաւ խնամել, լաւ կերակրել եւ իրեն նայապաշ իմացնել հիւանդներուն ամենափոքր պահանջըներն անգամ։ Բժշկապետը ամէն առտու կուգար իր հիւանդներն ստանալ, օրոնց կ'ընկերանար ոսկի մը ամէն մէկ զինուորի համար։ Հիւանդապահները ամենանկող կարգապահութեան ենթարկուած էին։ Իմանալով որ հիւանդապահ մը երեք ոսկի գրապանք էր, Սուլթանը զայն անմիջապէս տաժառակի բախտութեան զատապարտեց։

Այդ հաստատութեան բժիշկները շատ լաւ կը վճարուէին, ինչպէս եւ քաղաքին մէջ գործող բժիշկները։ օրոնցմէ ոմանք, իրականաբար մահի՞ք ունեցող, մեծ վարկ կը վայելէին այս ամենը արգելք մը չէր որ նորին վեհափառութիւնը թուրք «այդ բժիշկներէն զգուշանար» ինչպէս ժամտախառն է թէ մէկ ձեռքով անոնց պատիւներ ու գանձեր կը բաշխէր, միւս ձեռքով խտրու կը պատժէր անոնք որ այս կամ այն պատճառով իրեն համեմի ըլլալէ կը դադրէին։ Այսպէս, մեծ համբաւ վայելող հայ բժիշկ մը, Տր. Գեաթիպեան, կայսերական խնամութեան զոհ եղաւ։ Ճէֆեր աղա լրտեսը Ապախիլ Համիտին հաղորդած ըլլալով թէ պալատին մանկամարդ իշխանուհիներէն մին, զոր այդ բժիշկը կը խնամէր, սիրահարուած էր անոր, — երբեմն կը պատահէն ասանկ բաներ, — Տր. Գեաթիպեան ճամբու գրուեցաւ։

Գիտի՛ մը օր յետոյ, իր դիակը գտնուեցաւ Քառքէօյի ծովափքերը։ Սուլթանը իբար անցաւ, հրամայեց որ մանրակրկիտ քննութիւն մը կատարուի։ այդ քննութիւնը ընականարար յանգեցաւ այն եղբակացութեան թէ բժիշկը անձնապէս էր եղած, եւ ոչ ոք հաւատք ընդառնեց։ Բայց նորին վեհափառութիւնը, մեծանձն հոգի, 50000 Ֆրանք զի կեց զոհին ընտանիքին, եւ այդ եղաւ վերջաբանը հարմիր այդ տոմարին։ Արեւելքը՝ առանց իր տարօրինութեանց ու իր խորհուրդներուն՝ այլ եւս Արեւելք չդիտելու ար։

Սրաբնա գիտութեան եւ նախապէջ արուեստականութեան այս շրջանին մէջ ուր կը գտնուէր, արտաքին պիտի թուէր ըսել թէ մարդ մը կրնայ ամբողջապէս հրաժարել բժշկութեան աջակցութենէն։ Բայց ի՞նչ տարօրինակ տեսարան, — եւ ի՞նչ դատ, — տեսնել մարդ մը բազմաբարդ արտերով կրճաւած, քարատեւ տարապիներով տանուած, թերեւ անօրինակ ուղեղային աշխատութիւնէ մը ջախջախուած, եւ որ կը մեծեմեր արուեստին օգնութիւնը, նոյն իսկ երբ բուժումը կարելի է եւ կամ որ, գիժաղբութիւնէն ձանձրացած կամ ձեռն համար՝ անոր դիմելէ յետոյ, բժշկական պատուէրները անտեսելով կ'ընէ։ այս պայմաններուն մէջ է որ օր մը նորին վեհափառութիւնը հաւանեցաւ որ Պերլինէն — իր երկրորդ հայրենիքէն — բերել տան նշանաւոր բժիշկ մը։ Փրոֆեսոր Սենաթորն էր՝ կարծեմ, բերուելէք անձը, Գիշերանց է որ վարպետը նստէն ցաւա՞նք հանուեցաւ ու պալատ անաշնորհուեցաւ փակ կառքի մը մէջ, ոճրագործի մը պէս, եւ գաղափի նրբանցքներէ անցնելով Սուլթանին մօտ տարուեցաւ։ Ժողովուրդը պէտք էր չիմանար որ Սուլթանը ինքզինքը բժիշկի մը նայել կուտար։ Ինչ՞ մի որ պէտք է՝ ամէն գնով՝ ծածուկ պահել Սուլթանին հիւանդութիւնը։ Իբրեւ է որ ամէն շաբաթ անշուքիւր կայ, ուրբաթ՝ օրուան ձախաղարարութիւնը որուն խալիֆայութիւնը պարտաւոր են ներկայ գտնուիլ, օրովհետեւ առանց ատոր իրենց ազդեցութիւնը կը կորսնցնեն։ Կարծեմ թէ Ապախիլ Համիտ իր շատ երկարատեւ իշխանութեան ամբողջ ընթացքին մէջ ոչ մէկ անգամ ետ չէ մնացած իր այդ պարտականութիւնը կատարելէ։ ասի այնքան անհրաժեշտ պարտականութիւն մըն է, որ մահամեծ սուլթաններ, երեսներն չպարուած, ու թիկնապահներու

թեւին կրթնած, աստիպուած են մինչեւ մզկիթին դուռը քաշկրտուիլ, ամենուն աչքին առկեւ, հանցարար գիրք մը առնել ջանալով՝ ստոյիկեան ճիւղերու շնորհիւ Պատմութիւնը նոյն խիկ կը հաղորդէ թէ ժե. դարուն ժողովուրդը կեց-ջենքերով ողջունեց սուլթան մը, որ մզկիթը դացած ատեն, անշարժ ու վեհափառ գրեթէ մը ունէր. դիակ մըն էր ողջունուածը :

Դառնալով Փրօֆ. Սենաթորի այցելութեան, ինչպէս անցաւ դործը կայսերական տառնան-ցին մէջ : Սենակապանի մը (որ հիմա Կիպրոսի մէջ պարտուորիչ զիւղացանաբնութեան է Ղըր-կուսով) րաածին նայելով, Սուլթանը գերմանացի գիտունին տեպնոսթիթի լուրջ ուշադրութիւնը նմայելու ձեւն ունեցած է, բայց մարդը սեն-եակէն դուրս ելածին պէս չէլթան ալսըն ճանընը» (սատուան տունէ հողին) պողացիք է եւ հրամայեք է որ 4000 ոսկի վճարեն անոր, աւելցնելով «հարամ օլտուն» (չկարենայ վայելի) :

Մտքի այսպիսի տրամադրութիւններով, ինչպէս կ'ուզէ որ դորածէ այն պեղերը զոր իրեն կը պատուիրեն առնել, Ու վերջապէս՝ մինչեւ աստիճան մը իրաւունք ալ չունի՝ այդ բոլոր զեղախառն ուրդները քննելու, քանի որ անոնց թոյնի ամենաչնչին չափ մը աւելցնելով, կրնան զինքը ճանիկ մը պէս սողանալ : Թոյն-ներէ շատ աղէկ կը հասկնայ, եւ չափազանց լաւ գիտէ զօրութիւնը տեսակ մը թունաւոր նիւթերու որոնք, կ'ըսեն, բերուած են Նդիպ-տուէն արեւստին քաջատեղեակ տերվիչի մը ձեռքով : Բաթի արաղիին հին քաւրմբուռն բանաձեւերուն համեմատ պատրաստուած այդ տերվիչը, Էօմբէ Էֆէնտի, կ'աղբի հովանաւոյն սակ վեհապետին, որ Պուէրնիքով կ'ողողէ զինքը եւ մերթ ընդ մերթ թեքուս իր խառ-նեկուն էր զիմէ :

Եւ քանի որ այդ խորհրդաւոր պատրաստելին վրայ է խօսքերնրա, «չար խանկէն» բանա-ձեւը տանք. ամէն մարդ կը խօսի անոր վրայ եւ անոր համբաւը այնքան ահարկու է որ անոր քով «աթուս թոփանան» սալոյն խաղ մըն է պարզապէս Տաճկական խանկէն ելմէն խա-վէտով կը շինուի : Եփուիլէ յետոյ, մեղրի պէս զեղին, շատ ակնահաճոյ գոյնով ըմպելիք մը կ'արտադրէ, մինչդեռ իր զմայլելի բուրմը, որ քիչ մը հիւրիկի հտուր կը յիշեցնէ, հեղանք մըն է աստուծոյ թիւն համար : Բնական վիճակին

մէջ՝ առանց օտար բոյսերու խառնուրդի՝ այդ խանկէն պարզապէս ամբողջաւ է Սանկաւարդ արեւելահինդերուն համար, չկայ աւելի հեշտա-ւէտ խնջոյք քան այդ աստուածային ըմպելիքը խմել՝ Սթամպուլի սիկարէթներ ըմպելով : Իայց երբ մտադիր են զայն հրաժանել այնպիսի անձերու զորոնք քաղաքավարութիւն կ'ուզեն մէջտեղէն վերջնել՝ արագ եւ անորոշելի մաս մը հայթայթելով իրենց, անոր մէջ կ'աւել-ցնեն հիգուած ատեն — տաճկական խանկէն չեն մզեր — աղտորի, օլտակի, շնորհատորի, ծափիտորուկի, եւ նաեւ ակոնիտոնի եւ «սեվա-տիչի» մզուածքներ : Այս երկու նիւթերը, մա-նաւանդ վերջինը որ «վերաթիւն»ը կուտայ, — պէտք է որ լաւ բաղադրուած չար խանկէն հինը կաղճեն : Այս բաղադրութեան ձեւը — որ անշուշտ շատ անկատար է, — ինծի սորվեցուց իշխանի մը նախկին խանկէն, զոր ատիթ ու-նեցայ 1896ին Սթէնքի մէջ տեսնելու, ուր այդ բարի մարդը աստիպուած էր զալ հանգչիլ, — մեծամեծներու համարութիւնը վաղանցուկ է :

Շլլեքերը եւ զափնեակներն ալ շատ կը զործածուին Տաճկաստանի մէջ թոյններու պատ-րաստութեան համար. գնչուհիները Նդիպտուէն բերուած այդ բոլոր գաղտնիքներուն մէջ շատ փորձ, կ'երթան փնտռել իրենց տունկերը, որոնց մէջ պէտք է յիշել նաեւ սապուկը (colchique) լուսնին այսինչ որոշ օրերուն : այդ խոտերուն հիւթերովը քանչելի կերպով զի-տեն թոյններու ամբողջ շարքը պատրաստել, կան ատոնց մէջ որ զանդաղ սպաննող են : կան որ կը շանթահարեն, գնողին, — ընդհանրապէս գնողուհիին — փափաքին համեմատ : Մեծամեծ-ները մանրամասնօրէն կ'ուսումնասիրեն այդ բոլոր գաղտնի թունաղիտութիւնը : Արեւելքի մէջ, բոլոր վայրկեանները, կեանքի մամալոյ-ցին վրայ, թաքուն կամ յայտնի ողբերգութեան մը կը համապատասխանեն :

Բայց դառնանք վեհապետին : Տաքը տարիի չափ առաջ կարելի չեղաւ արգելիլ որ պալա-տին պալապանները հասարակութեան հագու-ղէին թէ նորին վեհափառութեան ասողական վիճակը այնքան պէշած էր որ հարկ տանը-ւած է նախադրուելու եւ Շէյի իւլ իսլամա-թեան գերագոյն ժողովը դուստրել ընտրելու համար այն որ պիտի յաջորդէր վեհապետին :

Բայց, այս լուրը հերթուեցաւ մամուլին մէջ՝
 Դերքին գործոց նախարարութեան կողմէ
 եկած պաշտօնական նօթի մը վրայ:

Սուլթանը սոսկալի կերպով կը տառապէր
 որքանին եզերքը կազմուած խղիւսայթէ (abcès)
 մը: Գոնէ ատով լուծ ժ՛ի կ'էտ նմանութեան
 կէտ մը ունեցած պիտի ըլլայ: Բայց կը վախ-
 նանք որ ապագային Միշլէնը պիտի չկարե-
 նան իր իշխանութիւնը երկու մասի բաժնել,
 — կեղանկէն (fistule) առաջ ու ետքը: Կո-
 ծաղրին մէջ յարատեւութիւնը միշտ անփո-
 փոխ է եղած: — Գործողութեան անգուլթ եղա-
 նակներ միշտ, եւ պատմաբանին համար
 անհնար պիտի ըլլայ այդ երկայն կեանքին
 ալլ եւ ալլ փութը իրարու հակադրել: Ինչ
 որ աւ ըլլայ, անոնի ցաւերու ազդեանքիւն
 տակ եւ իր սերիլիզէթ պէյին թախանձանքին
 վրայ՝ տեղի տալով, Ապտիւլ Համիտ ան-
 կողին մօտ կանչել ժողած էր Օսման էֆէնտի
 անուն անձ մը խախտաբոյժ եւ քարտիսանմայ,
 որ իր վտանգի թիւնը կը վայելէր Օսման իր
 հիւանդին փոփոխամիտ բնաւորութիւնը ճանչ-
 նալով եւ բնաւ փափաք չուենեալով միմիային
 իր վրայ առնելու պատասխանատուութիւնը
 դարմանումի մը որ չյաջողուաւ պարագային
 իրեն սուղի կրնար նստել, խնդրից որ համ-
 բաւաւոր Տր. Ռիֆաթ եւ Տր. Իլիաս փաշա-
 ներն ալ կանչուին Օգոստոսիան հիւանդը զննե-
 լով անկասեց որ սրբանային խղիւսայթը այնչե-
 քան ժողով կորոցի լաւ հըրուածի մը պէտք
 ունէր քայց կորոցի խօսքն իսկ ընելը կը
 բաւէ Սուլթանը կատաղութենէ խնթիցնելու
 համար: Խախտաբոյժը, խորամանկ մտանց որ
 մեղքիին ներարկում մը ընկածով գործին
 մէջէն ելլեւն էր, փնջ ու շատ լաւ գտած
 Ռիֆաթ եւ Իլիաս, Թախիլթի նման որ ծնէ
 կը վախնար ծնծ ուսեղէ: Օսման ներարկումն
 ըրաւ: Վայրկենական հանդարտացում մը յա-
 ռաջ եկաւ: Բայց սաւաղ, մէկ չարիքէն խո-
 սափած էին ուրիշ չարիքի մը մէջ ինչպիսի
 համար: Զիշ յետոյ ռուսով խիւսցնորութիւն
 մը եկաւ Սուլթանին վրայ: Եւ ահա դժբախտ
 Օսմանը ամբաստանուեցաւ: Ընթացիկ եւ
 իշխան կողմէն որոնք իրենց զուլան ճաշակելու
 կը ջանային, ինչպէս եւ Նըլարդի ամբողջ
 ճշմարիտիլային կողմէն: Իբր թէ ուզած
 ըլլար Սուլթանը թունաւորել: Անմիջապէս
 խեղճը մահուան դատապարտուեցաւ: Կատարին
 մէջ միշտ ի ժողով գումարուած դատարանէն
 Հազիլի կրօն մահուանէ խաշըրի շնորհիւ իւ-

լեմայի մը որ, Սուլթանին հանդարտացման
 մէկ վայրկենանէն օգտուելով յաջողեցաւ մահ-
 ուան պատիժը Նէմէն աքորի փոխել տալ:
 Պէտք է սակայն աւելցնել թէ Օսման Ենմէն
 հասնելէն քանի մը շաբաթ ետքը մեռաւ: Դաւով
 Տր. Ռիֆաթին եւ Տր. Իլիասին, պարտաւո-
 րուեցան հեռաւոր նահանգի մը ճահճային
 կլիմային մէջ գրեզազնացութեան երթալ:

Ուրիշ իրողութիւն մը յաջորդեց այս դէպ-
 քին: Տր. Էմին պէյ: Կիւլհանէի վարժարանէն,
 վեհապետը դարձնելու փառաւոր եւ վտան-
 ցաւոր պաշտօնն ընդունեցաւ: Բայց ճարդիկ
 փրթելով, բաւականացաւ հիւանդ մասին վրայ
 վուշի ալիւրի հասարակ ծեփելիքներ գնելով
 Այս անվստահութիւնն ընդունէր զո՞ւ, Ապտիւլ
 Համիտ շնորհ շնորհի վրայ պարզեց ետոր:
 Դժբաղդաբար, Էմին պէյ շատ կ'նասէր էր:
 Իր մահմետականութիւնը զատ, քրիստոնեայ
 սիրուէի մը ունէր: Պահ մը այս վերջինին հա-
 մար իր ունեցած սէրն այնքան բաւեց դարձաւ
 որ իր օրինաւոր կնոջն բաժնուելու խօսքը
 ըրաւ: Իր կնիւր վրէժը լուծեց, ինչպէս արեւ-
 ւելուհիները գիտեն վրէժ լուծել: Սուլթանին
 տեղեկագիր մը զրկեց, ամբաստանելով իր ա-
 մուսինը իբր նորին վեհապետութեան կեան-
 քին դէմ դաւող: Եւ այդ ամբաստանութիւնն ա-
 պացուցանելու համար փաստեր ցոյց կուտային,
 փաստեր զոր այդ սիրուն մեղքիւն ամբողջ-
 փութեամբ իր կողմէ հնարած էր: Սուլթանը,
 ստրափած, հրամայեց որ անմիջապէս խեղդա-
 մահ ընեն այդ կարծեցեալ յանցաւորը: Բայց
 այն պահուն ուրջայն «պաննելու վրայ էին»,
 Սուլթանին ցուեցը մեղմացած ըլլալով, մա-
 հուան պատիժը մշտական աքսորի փոխեց:
 Էմին ա'լ սոկայն չդարձաւ աքսորէն: Եւ մի'
 կարծեք թէ կը հնարեմ: Գերմանական լրա-
 դիրները այդ միջոցին երկայն բարակ պատմեցին
 եւ այս ողբերգական միջադէպը:

Ամենավերջին նամակներն որ Պոլսէն ստա-
 ցայ, կ'ընեն թէ այն ցաւը որով կը տառապի
 Սուլթանը, անեղի աւելներ գործած է իր
 վրայ: Կ'երեւայ թէ ֆիլիքական եւ բարոյական
 ծայրայեղ ուժաւորման մէջ ինչպե՞ս է
 պետք այնքան միջոցաւոր մահմետականե-
 րու, որոնք միշտ պարտաւոր են Սալիֆու-
 թեան դատին համար իրենց վերջին կաթիլը
 տալու: Թերեւս ուշիմութեն կատարած վի-

ըստուժական գործողութիւնմը պիտի կարենար իր ողորմելի գոյութիւնը երկարել։ Բայց միշտ կը հակառակի՝ վերաբուժական ունէ գործողութեան, համոզուած ըլլալով թէ կտրոցը իր նպատակէն անգին պիտի անցնէր։

Ո՞վ պիտի ըսէ արդէն խորհրդաւոր պայա-
տին բոլոր մոռալ ողբերգութիւնները։ Իր
բնակարանին խորը կծկտած, այն որուն ա-
նունը միայն գող կը պատճառէ՝ ինքն իսկ
ստրուկն է վախին։ Կ'ըսեն թէ իրիկուն մը իր
բժիշկներէն մէկուն անկողնին տակ ապաս-
տանած է։ Ու չէ՞ մի որ ամէն՝ իրիկուն տար-
բեր սենեակ մը կ'ընտրէ՝ իր մղձաւանջները
պատասպարելու համար։ Զանացինք վարագոյ-
րին մէկ անկիւնը վեր վերցնել։ Երանի՜ թէ
մեր այս տողերը կարդացուն մեր Ֆրանտա-
ցի պաշտօնակիցներէն, որոնք աշխարհիս
ամենէն ազւոր երկնքին տակ, ամենէն քաղցր
երկրին մէջ կ'ապրին, եւ զեռ կը գանգատին
իրենց բախտէն։

ՏՐ. ՀԵՐԱՆ,

Փարիզեան լրագրներէն կ'իմանա՞ք, ամե-
նամեծ ուրախութեամբ, թէ Գոնսերվաթուարի
այս տարուան տարեկան մրցման մէջ ողբեր-
գութեան առաջին մրցանակն ստացած է Հայ
մը, Պ. Մաքսուտեան։ Իմմանուէլ Առէն հե-
տեւեալը կը զրէ «Պիկարո»-ին մէջ։ «Պ. Մաք-
սուտեան ստացաւ, շատ արդարացի կերպով,
ողբերգութեան առաջին մրցանակը։ այդ երե-
տասարդը, որ ջգային զոգոցմունքներ քիչ մը
չափազանցութեան կը տանի, եռանդ ունի եւ
արուեստագիտական խառնուածք։ Արդէն Հայ
մըն է, եւ ո՞ր երկիրը պիտի կարենար ողբեր-
գուներ արտադրել իմէ ոչ այն երկիրը որ
այնքան զարուհիներ դէպքերով արեւնտե-
ցաւ»։ Զերմօրէն կը շնորհաւորենք մեր տաղան-
դաւոր հայրենակիցն իր այս փայլուն յաջողու-
թեան համար։

Ճաւով իմացանք որ Կիպրոսի որբանոցին
խնամակալութիւնը որոշած է փակել այդ
հաստատութիւնը՝ զայն միջնակարգ վարժա-
րանի մը փոխելու համար հարկ եղած տարե-
կան գումարն ապահովել կրցած չըլլալուն
համար։